Հայտարարություն

Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Շիկահողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (4-րդ դասարան 19 դասաժամ), իմ հայրենիքը(2 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ),կերպարվեստի (3,5 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ),քիմիայի(6 դասաժամ), Ֆիզիկայի (8 դասաժամ), աշխարհագրության (7 դասաժամ), հայոց պատմության (7,5 դասաժամ), համաշխարհային պատմության (4 դասաժամ), ՀԵՊ (4 դասաժամ), հասարակագիտության (4 դասաժամ), ֆիզկուլտուրայի (18 դասաժամ), ՆԶՊ (0,5 դրույք), գերմաներենի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ.հոկտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. Հոկտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին,«Շիկահողի միջնակարգ դպրոց »** ՊՈԱԿ-ում, հասցե՝Սյունիքի մարզ, Կապան համայնք,Շիկահող բնակավայր: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)94-16-62 հեռախոսահամարով: